

Հաւանական է որ նախարարական կազմակերպութիւնը բացարձակ աւատապետական բռնաւոր կազմակերպութիւն մը չէ եղած , այլ որոշ չափով ալ նահապետական կամ հայրական : Նախարարական ժողովուրդը հող մշակեր , շինութիւններ բեր , արուհատ ու արհատ զարգացուցեր , և միայն վտանգի պահուն իր զինւորական միջլիցիային զիմնէ : Ասով կը բացատրուի նախարարութեանց թագաւորական տուներու և կղերական իշխանապետութեանց հակառակիւ պատմական ընթացքը , թէ ոչ , ժողովուրդը պիտի ապստամբէր աւելի չուտ նախարարութիւններէ :

Ահա պատմութիւնը . —

« Ծառ անգամ Վասպուրական ու Տուրուբրան աշխարհներու գաւառներ կամ գունդեր կը յիշուին յայտնելով որ շատ ինքնագլուխներ կամ ինքնագլուխ իշխաններ կային այն աշխարհներու մէջ՝ ու ոչ մի երեւիլի գլուխ՝ ինչպէս և վերոյիշեալ աշխարհներուն . արդարեւ իսկ պատմութեան մէջ չի յիշուիր Տէր Վասպուրականի կամ Տուրուբրանոյ , (*) այլ Արշակունեաց կամ Հայոց միահնձան պետութիւն

(*) Այժմեայ Բրդական Հայտարանեաց աշիւթիւնը որ Բրդական աշիւթեթների մէջ զօրեղներէն մէկն է , ու կը բնակի Հին Քաջբերունեաց ու այժմեայ Արճէշ գաւառի սահմանները Վանի Նահանգի մէջ , աւանդաբար Հայերու պաշտպանութեան դերը կ'ստանձնէր , ասկէ կէս դար առաջէն սկսեալ ու աւելի առաջները՝ օտար խուժանական յարձակումներու ու աւարառութեանց ժամանակ՝ Հայերէն անոնց որ անգէն ու անպաշտպան տկարներ էին , կը դիմէին անոնց մօտ պաշտպանութիւն գտնելու : Հայտարանց կամ Հայտերանց , Հայ—Տէրանց բառն է . ինչպէս վերը տեսանք , կար Տէր-Վասպուրականի , Տէր Տուրուբրանայ , իսկ թէ՛ այդ Հայ-Տէրանցները իսկապէս Քիւրդ նախարարութիւններ էին բնակակից Հայերու , թէ՛ Հայեր էին նախապէս , այդ անյայտ կը մնայ դեռ : Հայտարանեաց մասին կարդալ գրքիս «Աշիրաթութիւն իւր փոքրիկ կէս-Դաշ-նակցական պետական ձև» վերնագրով հատուածին մէջ :